

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՅԵՎ  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ  
Մ Ա Ս Ի Ն

## Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ  
ՁՐՋԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՈՒԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ՏԵՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ  
ԿԱՏՈՐԵԼԻՔ ԱՌԷՆՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմխրհի կողմից հաստատված է  
1937 թ. ապրիլի 29-ին)

368 (47)  
խ-11

ՀՐԱՀԱՆԳՈՒՄ ԿԱՆՈՆԱԴՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937 թ.

43.971

33-11  
Ua2805

1 MAR 2010

# ПОЛОЖЕНИЕ

О страховых инспекторах и страховых ревизорах

# ИНСТРУКЦИЯ

Наркомфина Союза ССР о работе страховых инспекций районных финансовых отделов в сельских местностях

(Утверждены СНК СССР 29 апреля 1937 г.)

Տեխ. ձեկավոր. յեվ սրբագր. Ս. ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ

Ռեկլամ-Հրատ. Բյուրո.

Գյուղհրատի տպարան

Գլավլիտ № 304, 395 Պատվեր 518/519, Տիրաժ 2000

# ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիտեների  
Խորհրդի

№ 699

Մասկվա—Կրեմլ 1937 թ. ապրիլի 29-ին

ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԶՆԵՐԻ ՅԵՎ  
ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻԶՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական և ժողովրդական 1937 թ. մարտ 21-ի՝ «Գյուղատնտեսությանը դրամական հարկեր, ապահովագրական վճարումներ և բնական մատակարարումներ հաշվելու և գանձելու պարտականությունից ազատելու վերաբերյալ» վորոշման (Որ. ժող. 1937 թ. № 22 հոդ. 85) ու ապահովագրական վճարումներ հաշվելու պարտականությունը 1937 թ. հուլիսի 1-ից շրջանային ֆինանսական բաժինների վրա դնելու կապակցությամբ ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիտեների Խորհուրդը վորոշում է՝

Հաստատել ապահովագրական տեսուչների և ապահովագրական վերստուգիչների վերաբերյալ հետևյալ կանոնադրությունը.

11 SEP 2013

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՅԵՎ ԱՊԱՀՐ- ՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ապահովագրական տեսուչները բաժանվում են՝
- ա) ապահովագրական ավագ տեսուչներ (ըրջանային (ройонные) քաղաքային) .
  - բ) ըրջանային (участковые) ապահովագրական տեսուչներ .
  - գ) ապահովագրական տեսուչների ոգնականներ .
2. Յուրաքանչյուր ըրջանային (քաղաքային) ֆինբաժնում կազմակերպվում է ապահովագրական տեսուչություն, վորի կազմի մեջ մտնում են՝
- ա) ապահովագրական ավագ տեսուչը (ըրջանային, քաղաքային) .
  - բ) յենթաըրջանային ապահովագրական տեսուչները :
  - գ) ապահովագրական տեսուչների ոգնականները .
  - դ) ապահովագրական հաշվապահները .
- ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.— Մարդային բաժանում չունեցող դաշնակից հանրապետությունների ֆինստողկոմների, ինքնավար հանրապետությունների ֆինստողկոմների, մարդային և յերկրային ֆինանսական բաժինների վարիչներին թույլտվությամբ ապահովագրական ավագ տեսուչներին վրա միաժամանակ կարելի յե դնել նաև քիչ ապահովագրվողներ ունեցող ապահովագրական տեղամասի ապահովագրական տեսչի պարտականությունները :
- 3) Ավագ տեսուչներ, յենթաըրջանային ապահովագրական տեսուչներ և ապահովագրական տեսուչներ

րի ոգնականներ նշանակվում են խորհրդային իշխանությանը նվիրված, քաղաքականապես պատրաստված և գործնական վորակավորման տեսակետից ստուգված անձինք :

4) Ապահովագրական ավագ տեսուչներ կարող են նշանակվել .—

- ա) այն անձինք, վորոնք ունեն միջնակարգ կամ բարձրագույն կրթություն և վոչ պակաս քան յերկու տարի անպարսավ աշխատել են վորպես յենթաըրջանային ապահովագրական տեսուչներ :
- բ) այն անձինք, վորոնք չունեն միջնակարգ կրթություն և վոչ պակաս քան չորս տարի անպարսավ աշխատել են վորպես ապահովագրական տեսուչներ :

5. Յենթաըրջանային ապահովագրական տեսուչներ կարող են նշանակվել .—

ա) այն անձինք, վորոնք ունեն միջնակարգ կամ բարձրագույն կրթություն և վոչ պակաս քան մեկ տարի անպարսավ աշխատել են վորպես ապահովագրական տեսչի ոգնականներ, այն պայմանով, յեթե նրանք հատուկ առարկաներից քննության են յենթարկվել ԽՍՀՄ ֆինստողկոմատի կողմից հաստատված ծրագրով :

բ) այն անձինք, վորոնք միջնակարգ կրթություն չունեն և վոչ պակաս քան յերկու տարի անպարսավ աշխատել են վորպես ապահովագրական տեսչի ոգնականներ՝ այն պայմանով, յեթե նրանք յենթարկվել են «ա» կետում նշված քննությանը :

6. Ապահովագրական տեսչի ոգնական կարող են նշանակվել այն անձինք, վորոնք քննության յեն յենթարկվել հատուկ առարկաներից ԽՍՀՄ ֆինստողկոմատի կողմից հաստատված ծրագրով :



60336-67

Այն անձինք, վորոնք բարձրագույն կրթություն ունեն կամ ավարտել են ֆինանսական տեխնիկումներ, կարող են այդ պաշտոններում նշանակվել առանց քննության:

7. 1939 թ. հուլիսի 1-ից հետո ապահովագրական ավագ տեսուչներ, յենթաշրջանային ապահովագրական տեսուչներ և ապահովագրական տեսուչների ոգնականներ չեն կարող նշանակվել միջնակարգ կրթություն չունեցող անձինք:

8. ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1936 թվի հունիսի 2-ի «Մարզային և ստորին ֆինանսական որգանների հիմնական քշխատողներ նշանակելու վերաբերյալ վորոշման համաձայն (ԽՍՀՄ Որ. Ժող. 1936 թ. № 29 հոդ. 267)» ապահովագրական ավագ տեսուչներին, յենթաշրջանային ապահովագրական տեսուչներին և ապահովագրական տեսուչների ոգնականներին նշանակում, փոխադրում և աշխատանքից ազատում են՝ մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետությունների Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարները, ինքնավար հանրապետությունների Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարները, մարզային և յերկրային ֆինանսական բաժինները, շրջանային (քաղաքային) ֆինանսական բաժինների վարիչները առաջադրությամբ:

9. Ապահովագրական ավագ տեսուչներին, յենթաշրջանային ապահովագրական տեսուչներին և ապահովագրական տեսուչների ոգնականներին փոխադրելիս և աշխատանքից ազատելիս գործերն անսպասման պեսք և հանձնվեն ԽՍՀՄ Ֆինանսների Կոմիսարի կողմից հաստատված ձևի ախտով:

Գործերի հանձնումը կատարվում է վերագաս

ապահովագրական որգանի ապահովագրական վերստուգչի ներկայությամբ:

10. Ապահովագրական ավագ տեսուչներին, յենթաշրջանային ապահովագրական տեսուչներին և ապահովագրական տեսուչների ոգնականներին վկայական է տրվում ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի կողմից հաստատված ձևով, դաշնակից կամ ինքնավար հանրապետության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի, մարզային կամ յերկրային ֆինանսական բաժնի վարիչի (վորը նշանակել է տվյալ տեսչին) ստորագրությամբ և կնիքով:

## 2. ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

11. Ապահովագրական ավագ տեսուչների վրայ յե դրվում.—

ա) բոլոր յենթաշրջանային ապահովագրական տեսուչների և ապահովագրական տեսուչների ոգնականների աշխատանքի ղեկավարությունը, նրանց աշխատանքի ստուգումը՝ ապահովագրական որյեկտների հաշվառման, շենքերի հաշվառման և ղեահատման, ապահովագրական վսասների ալտեր կազմելու, պարտադիր և կամավոր ապահովագրության վարուցներ հաշվարկելու և գանձելու վերաբերմամբ:

բ) Ապահովագրական հաշվապահության ղեկավարությունը, ապահովագրական տեսուչների և ապահովագրական հաշվապահության կողմից կազմված ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններն ստուգելը և այդպիսիք վերագաս ապահովագրական որգաններին ներկայացնելը:

դ) Ապահովագրական գործավարության ղեկավարութիւնը և գործերն ու փաստաթղթերը կանոնափոր պահելու վրա հսկելը:

դ) Ապահովագրվողների բողոքների առթիվ գործեր վարելը և շրջանային ֆինանսական բաժնի վարիչի ցուցումով պետական ապահովագրութեան վարչութեանը ներկայացված բողոքները վերաբերյալ յեզրակացութիւններ նախագծեր կազմելը:

ե) ստուգումն օյն բանի, թե վորքան ձիշտ են կիրառել իրն յն թակա ապահովաւրական տեսուչները ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թ. ապրիլի 11-ին № 94/603 վորոշումը պարտադիր կոպարային ապահովագրութեան ապառքնրը գանձելիս:

դ) Ապահովագրական գործակալները աշխատանքի ղեկավարութիւնն ապահովագրութեան կամավոր տեսակները վերաբերմամբ:

12. յենթաշրջանային ապահովագրական տեսուչները վրա դրվում են՝

Ա. կամավոր ապահովագրութեան բոլոր տեսակները (անձնական ապահովագրութեան, գերկոպարային ապահովագրութեան, տնային գույքի ապահովագրութեան և այլն) իրագործումը, մասնավորապես.

ա) մասսայական—բացատրական աշխատանքը կամավոր ապահովագրութեան վերաբերյալ:

բ) ապահովագրական գործակալների աշխատանքի վրա հսկելն ապահովագրական կամավոր տեսակների ապահովագրութեան վերաբերմամբ.

գ) կամավոր ապահովագրութեան տեսակները վճարումների ընդունումը.

դ) կամավոր ապահովագրութեան տեսակների գործառնութիւնները հաշվառում կատարելը:

յ) պետական հիմնարկների և ձեռնարկութիւն-

ները, հասարակական և կոոպերատիվ կազմակերպութիւնները, նույն թիւում և կոլտնտեսութիւնները, ինչպես նաև կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների, մենատնտեսների և այլ քաղաքացիների կամավոր կազմավորումը ապահովագրված գույքի փաստների մասին ակտեր կազմելը և ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիտատի հրահանգի կարգով նրանց ապահովագրական վարձատրութեան վճարելը:

դ) ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիտատի հրահանգի կարգով անհատական ապահովագրութեան ապահովագրական վարձատրութեան վճարելը:

Բ. Պարտադիր ապահովագրութեան բոլոր տեսակների իրագործումը, մասնավորապես.

ա) կոլտնտեսութիւնների՝ պարտադիր կոպարային ապահովագրութեան յենթակա գույքի հաշվառումը,

բ) պետական հիմնարկների և ձեռնարկութիւնների, կոոպերատիվ և հաւարակական կազմակերպութիւնների գույքի հաշվառումը,

գ) կոպարային ապահովագրութեան ոքիեկտների հաշվառման լրիվ լինելը կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիների տնտեսութիւններում:

դ) կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների շինքերի հաշվառումն ու գնահատումը:

յ) կոլտնտեսութիւնների, կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների, ինչպես նաև պետական հիմնարկների և ձեռնարկութիւնների, կոոպերատիվ և հասարակական կազմակերպութիւնների գույքի ա-

պահովագրութեան համար ապահովագրական վճարումներէ հաշվառքը, ապահովագրված գույքի տերերին վճարման ծանուցագրեր հանձնելը, որենքով սահմանված ժամկետներում պարտադիր ապահովագրութեան վճարումներ կատարելու վրա հսկելը:

դ) պարտադիր կոպարալին ապահովագրութեան ապահովագրական ապառքներ բռնագանձելու համար միջոցներ ձեռք առնելը ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովրդային 1937 թ. ապրիլի 11-ի № 94/603 վորոշման համաձայն, այսինքն, ժողովրդական դատարանի վորոշմամբ կոլտնտեսութեաններէ, տնայնագործական-արհեստագործական արտերներէ և առանձին քաղաքացիներէ գույքի վերգրելը, գրավելն ու վաճառելը դրանց ունեցած ապառքները ծածկելու համար, ինչպես նաև ժամկետանց վճարումներէ համար որենքով սահմանված տույժ հաշվարկելն ու գանձելը:

ե) պարտադիր կարգով ապահովագրված գույքի ֆլաթներէ մասին աղտեր կազմելը և ԽՍՀՄ Ֆինանսներէ Ժողովրդական Կոմիսարիատի հրահանգի կարգով ապահովագրական վարձատրութեան վճարելը:

13. Այն բոլոր հիմարկները, ձեռնարկութեաններն ու կազմակերպութեանները, վորոնց գույքը յենթակա յե ապահովագրման, պարտավոր են անհրաժեշտ տեղեկութեաններ հաղորդել ապահովագրական տեսչութեանն առկա ապահովագրական որչեկտներէ մասին:

Այն դեպքերում, յերբ ապահովագրական տեսչութեանը պարզում ե, վոր իրեն կեղծ տեղեկութեաններ են հաղորդել, նա պարտավոր ե մեղավորներին քրեական պատասխանատուութեան յենթարկել:

14. Պարտադիր ապահովագրութեան որչեկտներէ

հաշվառում կատարելիս և այդ հաշվառման լրիվ լինելն ստուգելիս ապահովագրական տեսուչներն իրավունք ունեն ստուգելու տեղում առկա անասունները, ցանքեքը, բանջարանոցները, այգիներն ու այլ տուեսկեր, ինչպես նաև ստուգելու առկա շինքերը, արդյունարեքական ձեռնարկութեանները, սարքավորումը, ինվեստարը և ծանոթանալու հաշվապահական մատյաններին, փաստաթղթերին և գրանցումներին, վորոնք վերաբերում են պարտադիր ապահովագրութեան յենթակա գույքի հաշվառմանը:

Այդ ստուգումն ապահովագրական տեսուչները պարտավոր են կատարել անպայման ապահովագրվողի կամ նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայութեամբ:

15. Ապահովագրական տեսուչներն իրավունք ունեն ստուգելու ուղեվորներէ պարտադիր ապահովագրութեան ապահովագրական մուծանքներէ գանձման և փոխանցման վերաբերյալ փաստաթղթերը:

16. Ապահովագրական տեսուչներն իրավունք ունեն ստուգելու ապահովագրված գույքի գրութեանը և շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմալք դադարեցնելու պետական ապահովագրութեան պատասխանատուութեանն այն դեպքերում, յեթե կհայտարարվի, վոր ապահովագրվողներն անտնտեսվար վերաբերմունք են ունեցել ապահովագրված գույքի նկատմամբ:

17. Այն դեպքերում, յերբ ապահովագրական տեսուչը պարզում ե, վոր բնակչութեանից, կոլտնտեսութեաններից կամ այլ կազմակերպութեաններէ որենքով չսահմանված ապահովագրական վճարումներ են գանձվում, նա պարտավոր ե անմիջապէս դադարեցնել այդ

զանձումը և իր ձեռք առած միջոցների մասին հայտնել անդական դատախազին, շրջանային (քաղաքային) Ֆինանսական բաժնին և միաժամանակ դաշնակից կամ ինքնավար հանրապետության Ֆինանսների ժողովրդական կոմիտեարին, մարզային կամ յերկրային Ֆինանսական բաժնի վարիչին:

### 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻԶՆԵՐ

18. Ապահովագրական վերստուգիչներ են. —  
ա) գլխավոր ապահովագրական վերստուգիչները  
բ) ավագ ապահովագրական վերստուգիչները.  
գ) ապահովագրական վերստուգիչները.

19. ԽՍՀՄ Պետապի Գլխավոր Վարչության և դաշնակից հանրապետությունների Պետապի Վարչություններին կից են գլխավոր ապահովագրական վերստուգիչները (մեկական), ավագ ապահովագրական վերստուգիչներն ու ապահովագրական վերստուգիչները:

Ինքնավար հանրապետություններին, մարզերի և յերկրների Պետապի Վարչություններին կից են ավագ ապահովագրական վերստուգիչներն ու ապահովագրական վերստուգիչները:

20. Գլխավոր ապահովագրական վերստուգիչներ, ավագ ապահովագրական վերստուգիչներ և ապահովագրական վերստուգիչներ նշանակվում են խորհրդային իշխանությանը նվիրված, քաղաքականապես պատրաստված և գործնական վորակավորման տեսակետից ստուգված անձինք:

21. Գլխավոր ապահովագրական վերստուգիչներ կարող են նշանակվել այն անձինք, վորոնք ունեն

բարձրագույն կրթություն, վոչ պակաս քան հինգ տարի անպարսավ աշխատել են վորպես ավագ ապահովագրական վերստուգիչ, ապահովագրական վերստուգիչ կամ ավագ ապահովագրական տեսուչ:

22. Ապահովագրական ավագ վերստուգիչ կարող են նշանակվել այն անձինք, վորոնք ունեն միջնակարգ կամ բարձրագույն կրթություն, վոչ պակաս քան յերեք տարի անպարսավ աշխատել են վորպես ապահովագրական վերստուգիչ կամ ապահովագրական ավագ տեսուչ:

23. Ապահովագրական տեսուչ կարող են նշանակվել այդ անձինք. վորոնք ունեն միջնակարգ կամ բարձրագույն կրթություն, վոչ պակաս քան յերկու տարի անպարսավ աշխատել են վորպես ապահովագրական տեսուչներ:

24. Գլխավոր ապահովագրական վերստուգիչներին, ավագ ապահովագրական վերստուգիչներին ու ապահովագրական վերստուգիչներին նշանակում, փոխադրում և աշխատանքից հեռացնում ե ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիտեարը ԽՍՀՄ Պետապի Գլխավոր Վարչության առաջադրությամբ:

25. Գլխավոր ապահովագրական վերստուգիչներին, ավագ ապահովագրական վերստուգիչներին և ապահովագրական վերստուգիչներին պաշտոնական վկայական ե տրվում ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիտեարի կողմից հաստատված ձևով, ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիտեարի ստորագրությամբ և կնիքով:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

26. Գլխավոր ապահովագրական վերստուգիչները, ավագ ապահովագրական վերստուգիչներն ու ապահովագրական վերստուգիչները Պետապի ստորագրած վարչությունների և ապահովագրական տեսուչների աշխատանքի փաստաթղթային վերստուգումն են կատարում:

Այդ վերստուգումները կատարվում են պարզելով, թե վորքան լրիվ և ճիշտ է անցկացված պարտագիր ապահովագրության որոշումների հաշվառումը, ճիշտ են կիրառված ապահովագրական որոշումներն ու հրահանգները ապահովագրական վճարումներ վորոշելու և գանձելու և ապահովագրական վարձատրություն տալու ժամանակ, կանոնավոր և տարված ապահովագրական հաշվապահությունը և հաշվապահական գործավարությունը և ճիշտ է կազմակերպված ապահովագրական աշխատանքը:

27. Բոլոր ֆինանսական և ապահովագրական որգաններն, ինչպես նաև հիմնարկները, կազմակերպություններն ու ձեռնարկությունները պարտավոր են տրամադրել ապահովագրական վերստուգիչներին, նրանց պահանջմամբ, այն բոլոր հաշվետվական և այլ նյութերը, վորոնք անհրաժեշտ են վերստուգչին ապահովագրական վճարումների վորոշման և գանձման ու ապահովագրական վարձատրություն վճարելու ճշտությունն ստուգելու համար և աշակցություն ցույց տալ վերստուգիչներին վերստուգումների ժամանակ:

28. Այն բոլոր ղեկավարները, յերբ ապահովագրական վերստուգիչը վերստուգման պրոցեսում հայտարարում

և ապահովագրական որոշումներ և հրահանգների կամ ապահովագրական հաշվապահության ու ապահովագրության գործավարության կանոնների խախտումներ, նա պարտավոր է պարզել, թե ով է մեղավորը, հայտարարել որոշումների և հրահանգների, պետական ապահովագրության կանոնների խախտման պատճառները, պահանջել, վորպեսզի անմիջապես վերացվեն այդ խախտումները և հետևել իր պահանջի կատարմանը:

29. Յեթե ապահովագրական վերստուգիչը հայտարարում է, վոր ավագ ապահովագրական տեսուչը, յենթաշրջանային ապահովագրական տեսուչները, ապահովալրական տեսուչների ոգնականներն ու ապահովագրական հաշվապահները չարագործություններ են թույլ տվել իրենց, ապա նրան իրավունք է վերապահվում ժամանակավորապես հեռացնել նրանց աշխատանքից և անմիջապես տեղեկացնել այն որդանի ղեկավարին, վորը նշանակել է տվյալ տեսչին կամ հաշվապահին:

30. Ապահովագրական վերստուգիչը պարտավոր է, վերստուգման արդյունքների հիման վրա, կտ կազմել յերկու որինակից, վորից մեկը տրվում է վերստուգված ապահովագրական որգանի ղեկավարին: Բացի այդ, ապահովագրական վերստուգիչը պարտավոր է տալ բնութագրն այն ապահովագրական տեսուչների և հաշվապահների, վորոնց աշխատանքը վերստուգման է յեթարկվել:

31 Ապահովագրական աշխատանքի վերստուգման արդյունքների ժառին վերստուգիչը պարտավոր է



զեկուցել վերստուգված ապահովագրական որգանի ղեկավարին և, անհրաժեշտության դեպքում, դաշնակից կամ ինքնավար նանրապետության ժողովրդական կոմիսարներին խորհրդին կամ համապատասխան Գործազիր կոմիտեյի նախագահությանը:

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների կառուցի  
Նախագահ՝ Վ. ՄՈՒՈՏՈՎ

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների  
կառուցի Գործերի կառավարիչ՝ Մ. ԱՐԲՈՒԶՈՎ

60336-67

# ՎՈՐՈՇՈՒՄ

**ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ**

№ 700

Մոսկվա - Կրեմլ, 1937 թ. ապրիլի 29-ին

ԽՍՀՄ ֆինանսներ՝ ժողովրդական կոմիսարիատի՝ շրջանային ֆինանսական բաժինների ապահովագրական տեսչությունների գյուղական վայրերում կատարելիք աշխատանքի վերաբերյալ հրահանգը հաստատելու մասին:

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում է՝

Հաստատել ԽՍՀՄ ֆինանսների ժողովրդական կոմիսարների խորհրդի հրահանգը՝ շրջանային ֆինանսական բաժինների ապահովագրական տեսչություններին գյուղական վայրերում կատարելիք աշխատանքի մասին (տես հավելված):

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների կառուցի  
Նախագահ՝ Վ. ՄՈՒՈՏՈՎ

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների կառուցի  
Գործերի կառավարիչ՝ Մ. ԱՐԲՈՒԶՈՎ



## Հ Բ Ա Հ Ա Ն Գ

**ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԻՍԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՅՐԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

### 1. ԸՆԹՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, տնայնագործների, մեծատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների շենքերի, անասունների, ցանքերի և այլ գույքի պարտադիր կոպարային ապահովագրության, ինչպես նաև պետական հիմնարկների և ձեռնարկությունների, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների գույքի պարտադիր ապահովագրության և բոլոր տեսակի կաժավոր ապահովագրության ամբողջ աշխատանքը զրվում է շրջանային (районный) ֆինանսական բաժինների վրա:

Յուրաքանչյուր շրջանային ֆինանսական բաժ-

նում կազմակերպվում է շրջանային ապահովագրական տեսչություն հետևյալ կազմով՝ ավագ (շրջանային) ապահովագրական տեսուչ, յենթաշրջանային (участковый) ապահովագրական տեսուչներ և ապահովագրական հաշվապահ:

3. Ապահովագրական ավագ տեսուչն իր աշխատանքը կատարում է շրջանային ֆինանսական բաժնի վարիչի և ապահովագրական վերադաս որգանների գեկավարությունում:

Ապահովագրական ավագ տեսուչն անմիջականորեն ղեկավարում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչների և ապահովագրական գործակալների աշխատանքները կամավոր ապահովագրության տեսակների բնագավառում և պատասխանատու է նրանց կատարած աշխատանքի ճշտության համար:

4. Յուրաքանչյուր շրջան բաժանվում է ապահովագրական յենթաշրջանների բնակեցված կետերի քանակի, դրանց տերրիտորիալ դիրքի և այդ կետերի ու շրջանային կենտրոնի կապի պայմանների համեմատ:

Շրջանն ապահովագրական յենթաշրջանների բաժանելիս մի գյուղխորհրդի գյուղեր, վորպես կանոն, մտցվում են մեկ ապահովագրական յենթաշրջանի մեջ:

Ծանոթություն.— Ապահովագրական յենթաշրջանները, վորպես կանոն, պետք է գույքադիպեն շրջանի հարկային յենթաշրջաններին:

Յեթե անհրաժեշտ է լինում շրջանն ապահովագրական յենթաշրջանների բաժանել, ապա այն թույլ է տրվում միմիայն յուրաքանչյուր անգամ համապատասխան դաշնակից հանրապետության Ֆինանսների Ժողկոմի հաստատմամբ:

5. Ապահովագրական վողջ աշխատանքը տանելու համար յուրաքանչյուր ապահովագրական յենթաշրջանում նշանակում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչ, վորը գտնվում է շրջանային Ֆինանսական բաժնում:

Մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտարի, ինքնավար հանրապետությունների Ֆինանսների ժողովուհների, մարզային և յերկրային Ֆինանսական բաժինների վարիչների թույլտվությամբ, ապահովագրական ավադ տեսուչների վրա կարելի յէ միտժամանակ ղենել նաև քիչ թվով ապահովագրվողներ ունեցող ապահովագրական յենթաշրջանի ապահովագրական տեսչի պարտականությունները:

6. Երջանների գյուղերն ապահովագրական յենթաշրջանների բաժանել և յենթաշրջանային ապահովագրական տեսուչների ազգանունների մասին պետք է հրապարակել շրջանային մամուլում և, բացի այդ, իրազեկ դարձնել ապահովագրվողներին այդ մասին, հայտարարություններ փակցնելով գյուղխորհուրդներում, խրճիթ-ընթերցարաններում և այլ հասարակական վայրերում յուրաքանչյուր գյուղի:

Այդ հայտարարություններում պետք է նշել, վոր բողոքներ յենթաշրջանային ապահովագրական տեսուչների սխալ գործողությունների դեմ պետք է տալ շրջանային Ֆինանսական բաժնի վարիչին, ինչպես նաև պետք է ցույց տալ, թե վոր օրերը և վոր ժամերին և ապահովագրվողներին ընդունում շրջանային Ֆինանսական բաժնի վարիչը:

## 2. ՅՈՒՅՈՒԿՆԵՐ ԿՈՉՄԵԼԸ ՅԵՎ ԱՊՈՆՈՎԱԳՐԱԿՈՆ ՈՐՅԵՆՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

### Ա. ՊԱՐՏԱԳԻՐ ԱՊՈՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

7. Կրտստեսուությունների, կրտստեսականների, բանվորների, ծառայողների, տնայնագործների, մենատընտես գյուղացիների և այլ քաղաքացիների շինքների, անասունների, ցանքերի և այլ գույքի պետական պարտադիր կոպարային ապահովագրության, ինչպես նաև պետական ձեռնարկությունների և հիմնարկների, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների գույքի պարտադիր ապահովագրության աշխատանքը կատարելու համար յենթաշրջանային ապահովագրական տեսուչը կազմում է ապահովագրվողների ցուցակ՝

ա) կրտստեսությունների և սկզբնական կոոպերատիվների (ցուցակ № 1).

բ) կրտստեսականներ լրտնտեսությունների (ցուցակ № 2).

գ) բանվորների, ծառայողների և կոոպերացված տնայնագործների (ցուցակ № 3).

դ) մենատնտեսությունների (ցուցակ № 4).

ե) պետական հիմնարկների և ձեռնարկությունների, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների (ցուցակ № 5):

8 Յենթաշրջանային ապահովագրական տեսուչը պարտավոր է ստուգել պարտադիր կոպարային

ապահովագրութեան որբեկտնէրն ընտրովի կարգով,  
ընդգրկելով վոչ պակաս քան ապահովագրութեան բո-  
լոր որբեկտնէրի տնտեսութեաններէ 10 տոկոսը:

9. Յենթաշրջանային ապահովագրական տեսուչը  
պարտավոր է իրազեկ դարձնել ապահովագրվողներին  
այս հրահանգի 7-րդ հոդ, համաձայն կազմված ցու-  
ցակներէ մասին:

Իրա համար յենթաշրջանային ապահովագրական  
տեսուչը՝

ա) հայտնում է գրավոր յուրաքանչյուր կողմն-  
տեսութեանն ու սկզբնական կողմերատիրվին թե նը-  
րանց վոր գույքն ապահովագրութեան որբեկտնէրի  
հաշվառման համաձայն յենթակա յե պարտադիր կո-  
պարային ապահովագրութեան.

բ) գյուղխորհրդի թույլտուութեամբ ժողովի յե  
հրավիրում կողմնտեսականներին և մենատնտեսներին  
ու բացատրում նրանց պարտադիր կոպարային ապա-  
հովագրութեան վերաբերյալ որենքները և հայտնում  
է յուրաքանչյուր տնտեսութեանը՝ թե նրա վոր գույ-  
քը, անասուններն ու ցանքերն են հաշվի առնված  
պարտադիր կոպարային ապահովագրութեան համար,  
լսում է առանձին ապահովագրվողների դիտողութեան-  
ներն ու առարկութեանները և ստուգում դրանց  
ճշտութեանը:

10. Յենթաշրջանային ապահովագրական տեսու-  
չը պարտավոր է կազմել այն ապահովագրվողների  
ցուցակը, վորոնք ըստ որենքի պիտք և լրիվ կամ մաս-  
նակի կերպով ազատվեն ապահովագրական վճարումներ  
կատարելուց: Այդ ցուցակներն ապահովագրական ավագ  
տեսչի կողմից ստուգվելուց հետո շրջանային ֆինանսա-  
կան բաժնի վարիչի միջոցով ներկայացվում են շրջա-

նային ապահովագրական հանձնաժողովի հաստատմա-  
նը, իսկ պարտադիր կոպարային ապահովագրութեան  
վերաբերյալ որենքում մատնանշված դեպքերում՝ շր-  
ջային Գործադիր կոմիտեյի հաստատման:

11. Շրջանային ապահովագրական տեսուչի  
(ավագ ապահովագրական տեսչի և յենթաշրջանային  
ապահովագրական տեսուչների) վրա յե դրվում  
կողմնտեսականների, բանվորների, ծառայողների և  
մենատնտես գյուղացիների և այլ պարտադիր կոպա-  
րային կարգով ապահովագրվող քաղաքացիների շեն-  
քերի ցուցակագրումն ու գնահատումը:

Շենքերի ցուցակագրումն ու գնահատումը կա-  
տարվում է ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական կո-  
միտարի կողմից հաստատված հատուկ հրահանգի հի-  
ման վրա:

#### Բ. ԿՍՄԱՎՈՐ ԱԳԱՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

12. Շրջանային ապահովագրական տեսուչի  
(ավագ ապահովագրական տեսուչը և յենթաշրջանային  
ապահովագրական տեսուչները) իրազործու է կամա-  
վոր ապահովագրութեան բոլոր տեսակները (գերկո-  
պարային գույքային ապահովագրութեան, անձնական  
ապահովագրութեան, տնային գույքի, կամավոր ապա-  
հովագրութեան և այլն) ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդ-  
րական կոմիտարիատի հրահանգի համաձայն, կամա-  
վոր ապահովագրութեան յուրաքանչյուր տեսակի հա-  
մար առանձին:

13. Յենթաշրջանային ապահովագրական տեսու-  
չը զեկավարում է իր յենթաշրջանի գործակալներին  
աշխատանքը, ստուգում և կոնտրոլի յե յենթարկում  
նրանց գործունեյութեանը:

**3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՀԱՇՎԱՐԿԵԼՆ ՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂՆԵՐԻՆ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵԼԸ**

14. Այս հրահանգի 9-րդ հոդ. սահմանված կարգով ապահովագրվողներին պարտադիր կոպարային ապահովագրութուն ցուցակների մասին հայտնելուց և գրանց մեջ համապատասխան ուղղումներ մտցնելուց հետո (ապահովագրվողների ստուգված դիմումների հիման վրա), յենթաշրջանային ապահովագրական տեսուչը հաշվարկում և ապահովագրական վճարումներն յուրաքանչյուր տնտեսութայն համար առանձն և ներկայացնում այդ ցուցակներն ապահովագրական ավագ տեսչին, ստուգելու համար:

15. Ապահովագրական ավագ տեսուչը պարտա վոր և ստուգել յենթաշրջանային ապահովագրական տեսչի կազմած ցուցակը (ապահովագրվողների) և ապահովագրական վճարումները հաշվարկման ճշտությունը, ինչպես նաև արտոնությունների վերաբերյալ զեղչերի ճշտությունը:

Ստուգված ցուցակներն ապահովագրական ավագ տեսուչը ներկայացնում և շրջանային ֆինանսական բաժնի վարիչի հաստատմանը:

16. Շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից հաստատված ապահովագրվողների ցուցակի հիման վրա, յենթաշրջանային ապահովագրական տեսուչը դուրս և գրում յուրաքանչյուր առանձին ապահովագրվողի համար վճարման ծանուցագիր **ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիտարի կողմից հաստատված ձևով:**

Վճարման ծանուցագրերը ստորագրվում են ապահովագրական ավագ տեսչի և յենթաշրջանային ա-

պահովագրական տեսչի կողմից և վավերացվում շրջանային ֆինանսական բաժնի կնիքով:

17. Վճարման ծանուցագրերը յենթաշրջանային ապահովագրական տեսուչը հանձնում և յուրաքանչյուր ապահովագրվողին ստորագրությամբ կամ ուղարկվում և ապահովագրվողներին փոստով, պատվիրված նամակով:

Վճարման ծանուցագրերը ապահովագրվողներին ժամանակին հանձնելու պատասխանատվությունը կրում և յենթաշրջանային ապահովագրական տեսուչը:

Արգելվում և ապահովագրվողներին ապահովագրական վճարումներ կատարելու մասին պահանջներ առաջադրելը և տույժ գանձելը մինչև այդ վճարումներ կատարելու համար սահմանված ժամկետը լրացալը, ինչպես նաև վճարման ծանուցագրի հանձնելու պահից մինչ 15. որյա ժամկետի լրանալը:

**4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԳԱՆՁԵԼԸ**

18. Շրջանային ֆինանսական բաժնի վարիչը, ապահովագրական ավագ տեսուչը և յենթաշրջանային ապահովագրական տեսուչները պատասխանատու յեն ապահովագրական վճարումները պարտադիր կոպարային ապահովագրութայն վերաբերյալ որենքով նախատեսված ժամկետներում գանձելու համար:

19. Յեթե ապահովագրական վճարումները սահմանված ժամկետներում չեն կատարվում, ապա ապահովագրվողների նկատմամբ ձեռք են առնվում որենքով նախատեսված բոլոր միջոցները (նամակներ են ուղարկվում նախազգուշացումով, վոր ապառքը չվճարելու դեպքում գործը հանձնվելու յն դատարանին, բարդվում և տույժ, գույքը վերգրվում և և զբաղվում):

Պարտադիր կոպարային ապահովագրութայն կար-

գով ապահովագրվողների գույքի վերգրում ու գրավում կատարվում է ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովուրդների 1937 թ. ապրիլի 11-ի № 94/603 վորոշման համաձայն, այն ել միմիայն յենթաշրջանային տեսչի կողմից անձամբ:

### 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

20. Ապահովագրական վճարումները սխալ հաշվարկելու առթիվ ապահովագրվողները բողոքներ ներկայացնում են շրջանային ֆինանսական բաժնին: Ոչ ուշ քան վճարման ծանուցագիրը ստանալուց մեկ ամսվա ընթացքում: Վճարման ծանուցագիրը հանձնելուց մեկ ամիս լրանալուց հետո շրջանային ֆինանսական բաժնի բողոքներ չի ընդունում:

21. Շրջանային ֆինանսական բաժնի վարիչը պարտավոր է վոչ ուշ, քան բողոքն ստանալուց քսան որվա ընթացքում (իսկ կարմիր բանակայինների բողոքների վերաբերմամբ՝ վոչ ուշ, քան բողոքն ստանալուց յոթ որվա ընթացքում) քննել այն, վորոշում կայացնել և գրավոր հայտնել այդ մասին ապահովագրվողին:

Ապահովագրվողների բողոքներն ապահովագրական վճարումները սխալ վորոշելու դեմ անպայման քննում է անձամբ շրջանային ֆինանսական բաժնի վարիչը, քանի վոր ապահովագրվողների բողոքներ քննելն ու նրանց որինական պահանջները բավարարելը շրջանային ֆինանսական բաժնի վարիչի անմիջական պարտականությունն է ու լավագույն մեթոդներից մեկը՝ ապահովագրական տեսուչների աշխատանքն ու նրանց կողմից խորհրդային որենքները պահպանելն ստուգելու համար:

Բողոքը քննելու համար հրավիրվում է բողոքա-

տու ապահովագրվողը: Յեթե նա չի ներկայանում, ապա բողոքը կարելի չի քննել նրա բացակայությամբ: 2. Շրջանային ֆինանսական բաժնի վարիչի վորոշումը կարելի չի բողոքարկել վոչ ուշ քան ապահովագրվողին հայտնելուց մեկ ամսվա ընթացքում մարզային բաժանում չունեցող գաշնակից հանրապետություն կամ ինքնավար հանրապետություն Պետապի Վարչությունը, Պետապի յերկրային կամ մարզային վարչությունը: Շրջանային ֆինանսական բաժնիների վորոշումների դեմ մեկ ամսվա ժամկետը լրանալուց հետո տրված բողոքները Պետապի Վարչությունն չի ընդունում:

Գաշնակից կամ ինքնավար հանրապետության, մարզի կամ յերկրի Պետապի Վարչությունը պարտավոր է քննել իրեն տրված բողոքը վոչ ուշ, քան այն ստանալուց մեկ ամսվա ընթացքում (իսկ կարմիր բանակայինների բողոքների նկատմամբ՝ վոչ ուշ, քան բողոք ստանալուց տասնհինգ որվա ընթացքում) և իր վորոշման մասին գրավոր հայտնել բողոքատույին ու համապատասխան շրջանային ֆինանսական բաժնին:

Բողոք տալը չի կասեցնում պարտադիր ապահովագրության ապահովագրական վճարումների գանձումը:

### 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂՆԵՐ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԸՆԳՈՒՆԵԼՆ ՈՒ ՀՈՇՎԻ ԱՌՆԵԼԸ

23. Ապահովագրվողներն իրավունք ունեն մուծել իրենցից հասանելիք պարտադիր ապահովագրության ապահովագրական վճարումները՝

ա) շրջանային կենտրոնում՝ շրջանային ֆինանսաական բաժնի ղրամարկղը կամ Պետրանկի ֆիլիալի ղրամարկղը:

բ) հարկային և ապահովագրական վճարումներ ընդունող հատուկ ղրամարկղները, գյուղական վայրերում:

գ) հարկային և ապահովագրական վճարումներ ընդունող շրջագայող ղրամարկղները, գյուղական վայրերում:

Ապահովագրվողները կարող են նաև իրենցից հասանելի քուժարները փոխադրել փոստով շրջանային ֆինանսական բաժիններին:

Արգելվում է ապահովագրական տեսուչներին և ապահովագրական գործակալներին պարտադիր կոպարային ապահովագրություն ապահովագրական վճարումներ ընդունելը:

24. Կամավոր ապահովագրություն տեսուչների ապահովագրական վճարումները կարելի չէ կատարել այս հրահանգի 23-րդ հոդ. նախատեսված կարգով: Բացի այդ, կարելի չէ մուծել նաև անմիջականորեն, ապահովագրական տեսուչների և ապահովագրական գործակալների միջոցով ԽՍՀՄ Ֆինանսն րի ժողովրդական Կոմիսարի կողմից սահմանված ձևի անդորրագրով:

25. Ապահովագրական վճարման մուծումների հաշվառումը յուրաքանչյուր տնտեսություն և յուրաքանչյուր գյուղխորհրդի համար, կատարում է շրջանային ապահովագրական տեսուչությունը ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական Կոմիսարի կողմից հաստատված հատուկ հրահանգի կարգով:

## 7. ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱԿՏԵՐ ԿՈՋՍԵԼԸ

26. Յենթաշրջանային ապահովագրական տեսուչն ալտեր կազմում է՝

ա) շենքերում և գույքերում հրդեհից և այլ տարերային աղետներից առաջացած վնասների մասին:

բ) անասունների անկման ղեպքերում առաջացած վնասների մասին:

գ) գյուղատնտեսական մշակույթների փչացման ղեպքերում առաջացած վնասների մասին, յերբ «ա» «բ» և «գ» կետերում թված որչեկտներում մեկ ապահովագրական ղեպքից առաջացած վնասը յերկու հազար ուերլուց ավելի չէ:

Շենքերում և այլ գույքերում առաջացած վնասների մասին ալտեր կազմում են ապահովագրվողի և յերկու վկայի մասնակցությունը, իսկ ցանքեր փչանալու ղեպքում՝ ապահովագրվողի և գյուղատնտեսի մասնակցությունը:

Ապահովագրված անասունների անկման յեղակի ղեպքերում ալտեր կազմում են գյուղխորհուրդները, ցույց տալով ապահովագրված անասունների անկման պատճառներն անասնաբուժի կամ բուժակի տեղեկանքի համաձայն: Այդ ալտերը ենթաշրջանային ապահովագրական տեսուչն անհրաժեշտ ղեպքերում ստուգում է տեղում—մեկնելով այնտեղ:

27. Յեթե ապահովագրվողը հայտարարում է, վոր այս հրահանգի 26-րդ հոդ. նշված գույքերում տեղի ունեցած վնասը յերկու հազար ուերլուց ավելի չէ, սակայն շրջանային ապահովագրական տեսուչության կողմից սահմանված լիմիտից չի գերազանցում, ապա ալտ կազմելու համար պետք է անձամբ մեկնի ապահովագրական ավագ տեսուչը:

28. Յենթաշրջանային ապահովագրական տեսչի կազմած ալտերն ստուգում է ապահովագրական ավագ տեսուչը:

29. Ապահովագրական ավագ տեսչի կողմից ըստուգված ակտերը (յենթաշրջանային ապահովագրական տեսչի) շենքերի և ցանքերի փչացման և անասունների անկման վնասների մասին, ինչպես նաև այն ակտերը, վորը կազմել է ապահովագրական ավագ տեսչին ապահովագրության նույն որչեկտները վերաբերմամբ, հաստատում է շրջանային ապահովագրական հանձնաժողովը:

Յեթե ապահովագրական ավագ տեսուչը համաձայն չի լինում շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմանը, ապա նա կարող է հարցը մտցնել ապահովագրական վերադաս որդանի քննութայանը: Այդ դեպքերում այդ վնասների վճարումը պետք է դադարեցնել:

30. Այս հրահանգի 29-րդ հոդ. կարգով հաստատված վնասները շրջանային ապահովագրական տեսչութունը վճարում է ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական կոմիտեի մասին հրահանգի համաձայն:

31. Կյանքի ապահովագրության (կոլեկտիվ և անհատական) վնասները ձևակերպում են և անհրաժեշտ դեպքերում ստուգում յենթաշրջանային ապահովագրական տեսուչները, անկախ ապահովագրական գումարից: Կյանքի կոլեկտիվ ապահովագրության վնասները քննում է ապահովագրական ավագ տեսուչը և հաստատում շրջանային ֆինանսական բաժնի վարիչը, վորից հետո շրջանային ապահովագրական տեսչութունը վճարում է ԽՍՀՄ Ֆինանսական կոմիտեի հրահանգի կարգով:

Կյանքի անհատական ապահովագրության վնասները հաստատվում և վճարվում են ԽՍՀՄ Ֆինանսական կոմիտեի կողմից սահմանված կարգով, նայած ապահովագրության տեսակին և ձևին:

32. Շրջանային ապահովագրական տեսչութունների սխալ գործողութունների դեմ—վնասներ վճարելու հետ կապված հարցերի առթիվ բողոքներ տրվում և քննվում են այս հրահանգի 21 և 22-րդ հոդ. հոդ. նախատեսված կարգով:

Շրջանային ապահովագրական հանձնաժողովները սխալ գործողութունների դեմ բողոքներ տրվում են մարդային բաժանում չունեցող դաշնակից հանրապետութունների, կամ ինքնավար հանրապետութունների, յերկրները կամ մարզերի Պետապի վարչութուններին, իսկ այդ վարչութունների վորոշումների դեմ մարդային բաժանում ունեցող դաշնակից հանրապետութունների Պետապի վարչութուններին, կամ ԽՍՀՄ Պետապի Գլխավոր վարչութայանը ըստ պատկանելության, պահպանելով այս հրահանգի 21 և 22-րդ հոդ. հոդ. հիշատակված ժամկետները:

8. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ (ԳՈԿՈՒՄԵՆՏԱԼ) ՍՏՈՒԳՈՒՄԸ

33. Բոլոր տեսակի ապահովագրության գծով ստացված ապահովագրական վճարումները փոխանցվում են համապատասխան ապահովագրական որդանների հաշվին, մտնում ԽՍՀՄ Պետապի Գլխավոր վարչութայան բալանսի մեջ ու չեն կարող վերցվել դաշնակից և ինքնավար հանրապետութունների պետական բյուջեյի կամ տեղական բյուջեյների համար կամ էլ ծախսվել վորևէ այլ կարիքների համար (բացառութայամբ հրդեհների և անասունների անկման դեմ պայքարելու և դրանք կանխելու նպատակով որևէքում նախատեսված մասհանումների):



43. 971

Դրա հսկողութեան պատասխանում և Պետապի վարչութիւնների և տեղապահական տեսչութիւնների վրա:

34. Մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետութիւնների, ինքնավար հանրապետութիւնների, մարզերի և յերկրների Պետապի վարչութիւնները պարտավոր են լնչ պակաս քան տարին մեկ անգամ ապահովագրական աշխատանքի փաստացի (դոկումենտալ) ստուգում կատարել յուրաքանչյուր շրջանային ապահովագրական տեսչութիւնում:

Մարզային բաժանում ունեցող դաշնակից հանրապետութիւնների Պետապի վարչութիւնները պարտավոր են լնչ պակաս քան տարին մեկ անգամ փաստացի ստուգում (դոկումենտալ) կատարել իրենց յինթակա Պետապի յուրաքանչյուր վարչութիւնում:

ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական  
Կոմիտեի Գ. Գրինկո

Handwritten notes: Կ. Ս. Ս. Ս.

Handwritten note: 877

